Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում գտնվող Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

2008 թվականի հունվարի 25-ի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10 –րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

Հոդված 1

Համաձայնագրի 5–րդ հոդվածի 3–րդ կետի 3–րդ ենթակետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«3) ներմուծվում են տիեզերական տարածքի հետազոտման եւ օգտագործման, ինչպես նաեւ տիեզերական սարքավորումները տիեզերք բաց թողնելու ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող տիեզերական տարածքի հետազոտման եւ օգտագործման, ինչպես նաեւ տիեզերական սարքավորումները տիեզերք բաց թողնելու ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում մաքսային միության մաքսային տարածք ներկրվող ապրանքների ցանկի համաձայն:»:

Հոդված 2

Կողմերի միջեւ սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Համաձայնագրով սահմանված կարգով:

Հոդված 3

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ մտնում ավանդապահի կողմից՝ դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է Աստանա քաղաքում, 2013 թվականի սեպտեմբերի 25–ին, մեկ բնօրինակով, ռուսերենով լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական կոմիտեում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի իր հաստատված օրինակը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	**Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից**